

Մի բանի վիճակագրական տեղեկութիւններ  
Ղարսի ցցանի մասին.

Քաղաքակիրթ երկիրներում պետական առաջնակարգ խնդիրն սերից մէկը կազմում է վիճակագրութիւնը, որի համար ոչինչ չէ խնայում: Անելով մեծամեծ ծախքեր, հասարակական բարեհաճ աջակցութեամբ, յաճախակի կազմակերպում են վիճակագրութիւններ, ծաւալելով իւր մէջ բաղմակողմանի ճշգրիտ տեղեկութիւններ երկրի տնտեսական, ֆիզիքական և կուլտուրական վիճակի մասին:

Համեմատելով Եւրոպական երկրների հետ, Ռուսաստանը այդ կողմից յստին տեղերից մէկն է բռնում, որը վիճակագրական գործը մեծ չափով կաղում է: Ռուսաստանի պատմական կեանքում միակ լրիւ ժողովրդագրութիւնը 1897 թուինն է, որը ունի իւր աչքի ընկնող պակասաւար կողմերը: Ժողովրդական կեանքի կուլտուրական առաջխաղացութիւնը կարող է երեան գալ միմիայն այն ժամանակի, երբ յաճախակի կազմակերպում են վիճակագրութիւններ ու համեմատում են թւերը 1897-ի ժողովրդագրութեան տեսալներով մինք հնարաւորութիւն ունենք գաղափար կազմելու միմիայն մինչ այդ ժամանակի հասարակական կեանքի մասին և ուրիշ ոչինչ: Հետուել կեանքի զարգացմանը ոչ մի հնարաւորութիւն չունինք: Հետո այդ տեսակետից պէտք է բերկրանքով ողջունել գալիք վիճակագրութիւնը, որը ծրագրում է կազմակերպի 1915 թ.: Ռուս ժողովրդի ամենալայն խաւերը ուշադրութեամբ են վերաբերում այդ ձեռնարկուելիք վիճակագրութեանը, նամանակութեանը մեծ նախապատճառութիւններ են տեսնում զեմօտոները, որոնք մշակում են հարցեր, կցելով ընդհանուր վիճակագրութեամը, որ կրում են միմիայն տեղական բնաւորութիւն: Իսկ մեզանում ով պէտք է լրացնի այդ պակասը:

Ստորև բերւած Ղարսի շրջանի մասին ստատիստիկական միքանի տեղեկութիւնները տալիս ենք, օգտականով 1897 թ. ժողովրդագրութիւնից բուկ միւս երկրների կամ նահանգների վերաբերական վերաբերակ վիճակագրական թուերը վերցնում ենք քրոֆ: Յօնական Ստատիստիկա գործից:

Աղքարնակութեան խոռութեամբ Ղարսի շրջանը, համեմատելով Ռուսաստանի միւս նահանգների հետ, միջին տեղն է բռնում: Ունի 5729 քառ. վեր. տարածութիւն 290654 ազգարնակութեամբ: ուրիշն մի քառակուսի վերստի վրայ ապրում են 50,7 մարդ: Բնակչութիւնը անհամեմատ խիտ է քան Սիբիրը (1897 թ.-0,5,

1906 թ.—0,6) և Միջն Ասիան (2,5 և 2,9) և նօսր քանչ լինական նահանգները—104,3 մ. մի քառ, վեր. վրայ: Այսպէս որ իւր խառնթեամբ կարելի է համեմատել Խուսասատանի ներքին նահանգների հետ: Բայց եթէ համեմատելու լինենք Եւրոպական միւս պետութիւնների հետ, կը տեսնենք որ Ղարսի շրջանը անհամեմատ նօսր է բնակուած քան Սաքոսնեան 301 մ. մի քառ, կիլ., Բնդիկան 245, Անդիկան 215, Խտալիան 117 և այլն:

Ազգաբնակչութիւնը Ղարսի շրջանում բաժանւում է զանազան ազգութիւնների, ցեղերի, կրօնների, որոնց մասին նախքան խօսելը, նպատակայարմար ենք համարում առաջ բներել ստատիստիկական աղիւսակը, ուր բնակչութիւնը բաժանւած է ըստ սեռի, ազգութիւնների, ամեն մի ազգութիւն ընդհանուր ազգաբնակչութեան որ տոկոսն է կազմում և 1000 արականին քանի իգական է ընկնում:

Ազգաբնկութեան բաժանումը ըստ ազգութեանց եւ 0/  
տամբողջ ազգաբնակ. վեցաբերեալ:

	Արական	Իդական	Երկու սեռը միասին	Ո. ընդհա- նուր ազգ. վերաբերեալ	1000 արա- կանին կանկա- զամին
1. Ռուսներ,	19910	7946	27856	9,58	399,1
2. Լեռեր և մնացած սլաւոններ.	3218	36	3254	»	»
3. Լիտովյաններ և լատիշներ.	948	8	956	»	»
4. Գերմանացիք.	416	65	481	»	»
5. Յոյներ	16469	16124	32593	11,24	979,1
6. Հայեր.	39013	34393	73406	25,23	881,6
7. Պարսիկներ, քիւրդեր և ասե- տիններ.	23322	20734	44056	15,16	889,0
8. Հրէաններ.	1075	63	1138	»	»
9. Վրացիներ.	386	157	543	0,19	406,7
10. Ֆիններ.	357	127	484	»	»
11. Կովկաս. լեռնա- կաններ.	513	184	697	0,24	358,7
12. Թուրքեր.	54859	50183	105042	36,44	918,4
13. Մնացած ազգու- թիւններ.	2	»	2	»	»

Միջն թուրք շրջանում 1000 արականին գալիս է 810,1 իգական:

100%

33. **Թուրքեր.**25. **Հայեր**15. **Պարսիկներ**8. **Յոյներ**7. **Առևներ**

Եթէ բնակչութիւնը բաժանելու լինենք ըստ կրօնների, կտեսնենք որ գերակշռող տեղը բռնում են մահմեղականները 149795 հոդի, որից թուրքեր 105042 մ., պարսիկներ և այլն 44753 մ. իսկ քրիստոնեանների ընդհանուր թիւը համում է 134573 մ. որից հայեր՝ 73406 մ. 25,25%, յոյներ՝ 32593 մ. 11,21% և ռուսներ 27856 մ. 9,58%:

Բայց ամենից հետաքրքրականը ներկայացնում են այն թւերը, որոնք ցոյց են աալիս թէ 1000 արականին քանի իզական է գալիս: Եւրոպայում 1000 տղամարդին գալիս է միջին թւով 1024 կին, Ասիայում 958 կին և այլն, իսկ ամբողջ երկրագնդի համար 1000 տղ. գալիս է 988 կին: Վերադառնալով Ռուսաստանին պէտք է նկատել, որ 1897 թ. վիճակագրութեամբ ամբողջ Ռուսաստանի համար 1000 տղ. գալիս է 1011 կին: Միմիայն Եւրոպական Ռուսաստանում աւելի նկատելի է այդ գերակշռութիւնը (1000 տղ.—1042 կին) Կովկասի համար 1000 տղ. գալիս է 901 կին, իսկ մասնաւորապէս Ղարսի շրջանի համար 1000 տղ. միջին թւով գալիս է 810 կին, մի թիւ, որը շատ աննպաստ է բնակչութեան բազմանալու համար: Ազգութիւններից կանանց ամենամեծ տոկոսը տալիս են յոյները 979, թուրքերը 918, հայերը 811, իսկ ամենավերջին տեղը բռնում են ռուսները 1000 տղ.—399, կին: Եյն ինչ Ռուսաստանում կան նահանգներ, ուր կանայք շատ մեծ թւով են գերակշռում տղամարդկանցից: Օր. 1897 թ. վիճակագրութեամբ հազար տղամարդին զալիս է նարաւութիւն նահանգում 1326 կին, կալուգայի նաև՝ 1258 կին, Արխանգելսկի նաև՝ 1116 կին և այլն:

Հետաքրքրական է նկատել, որ Ղարսի շրջանում ամեն մի տնաեսութիւն ունի այնքան աշխատող ձեռքեր, որ կարիք չի զգաց-

ւում դրսի բանւորական ոյժերին Այդ ակներև անելու համար առաջ բերենք թուերը:

Բնակչութեան բնժանումը լայ Տնտեսութիւնից:

Բոլոր անտես- ութեան ընդ- հանուր թիւը	Նրանցում		Մելհական անտե- սութիւններին պատկանող		Դողմնակի անձնա- ութիւնը	
	Արական	Իգական	Արական	Իգական	Արական	Իգական
38,175	160,571	130,083	133,698	128,773	5301	1107
		290,654	262,471		6408	

Բաւական է մի թեթև ակնարկ ձգել այս աղիւսակի վրայ, որ նկատենք, թէ ինչպիսի չնչին տոկոս են կազմում ( $0.023\%$ ) տնտեսութիւններին չպատկանող անհատները, Դորա միակ պատճառը այն է, որ նահանգում պարագում են միմիայն երկրագործութեամբ և արդիւնաբերական հիմնարկութիւններ՝ օրինակ զորաբաններ և այլն, բացակայում են:

Այժմ տեսնենք, թէ ինչ մակերեսոյթի վրայ է գտնուում կըրթական գործը: Թող զարձեալ խօսին թւերը:

### Կ Ր Ո Ւ Բ Ի Ւ Ց Ը

Տ ա ր բ ա կ ա ն				Մ ի ջ ն ա կ ա ր գ				Բ ա ր ձ ր ա գ ո յ ն			
Արական	Իգական	Բոլորը	%	Արա- կան	Իգա- կան	Բոլ- որը	%	Արա- կան	Իգա- կան	Բոլորը	%
27092	3025	30127	96,13	738	280	1018	3,28	189	5	1940	62

Բոլոր դրագէտների թիւն է 31339, որը կազմում է  $10,78\%$  ամբողջ աղգաբնակութեան:

$100\%$

Տարբական

Միջնակարգ

Բարձրագոյն

Աւրեմն բոլոր գրագէտների թիւը հասնում է 31389 հոգու, որը շրջանի ազգաբնակչութեան 10,78% է կազմում: Այդ տոկոսը այսքան չնշին ու խղճակի մի թիւ է, որ համեմատել չի կարելի Եւրոպական երկրների և նոյն իսկ Եւրոպական Ռուսաստանի գրագիտութեան տոկոսների հետ: Պէտք է նկատել, որ համեմատարար միջնակարգ ու բարձրագոյն կրթութեան տէր մարդիկ մի աննշան թիւ են կազմում՝ 1218 հոգի:

Գրագիտութեան տոկոսը աւելի կը ցածրանար, եթէ գրագիտութիւնը մի քանի ազգութիւնների մէջ համեմատարար բարձր չը լինէր, օր. ռուսների մէջ գրագէտների տոկոսը հասնում է 41,54%, Բայց աւելի ակներս անելու համար թէ շըջանի որ ազգութեան մէջ գրագիտութիւնը բարձր է կամ ցածր, առաջ բերենք թուերը:

### Գրագիտութիւնը ըստ ազգութիւնների եւ $\%$

Ամբողջ բնակչութիւնը.	Արական	Իգական	Երկուսեռ միացածին	Գրագ. $\%$ ըստ ազգ.
	160,571	130,083	290,654	մէջ թիւն է 10,78%.
Բոլոր գրագէտները	28019	3320	31339	գրագիտութիւնը մէջ թիւն է 10,78%.
1. Ռուսներ	10703	869	11572	$41,54$
2. Լեհներ և ուրիշ սլավոն.	1824	23	1874	» »
3. Լիտովյաններ	625	5	630	» »
4. Գերմանացիք	222	44	266	» »
5. Յոյներ	4906	363	5269	$16,07$
6. Հայեր	5619	1523	7142	$9,59$
7. Պարսիկներ, քիւրդեր և ասետ.	530	31	561	$1,27$
8. Հրէաներ	622	18	640	» »
9. Վրացիներ	233	89	322	$59,50$
10. Կովկասնական լեռնական.	175	10	185	$26,54$
11. Ֆիններ	254	96	350	» »
12. Թուրքեր	2301	247	2548	$2,45$
13. Մնացած ազգ.	—	—	—	—

$100\%$ 

59, 30 <sup>0</sup> 41, 52 <sup>0</sup> 16, 97 <sup>0</sup> 9, 50 <sup>0</sup> 2, 43 <sup>0</sup> 1, 27 <sup>0</sup>	Պատմական գործում ամենայիշտին տեղը ըռնում են պարսիկները, քիւրդերը 1,27, ուրեմն 44,056 հոգուց գրագէտ են 561 հոգի, իսկ մասցած 43495 հոգի խարիս- փում են խաւարում, 105,042 թուրքից գրագէտ են 2550 հոգի 2,43 <sup>0</sup> -ը, հայերի 9,59 <sup>0</sup> -ն է գրագէտ։ Գրագիտութեան ամենա- բարձր տոկոսը տալիս են վրացիները 59,30 <sup>0</sup> , իսկ երկրորդ տեղը ըռնում են ոռւաները 41,54 <sup>0</sup> ։	Պար- սիկներ
40, 32 <sup>0</sup> 48, 95 <sup>0</sup> 83, 96 <sup>0</sup> 90, 11 <sup>0</sup> 97, 25 <sup>0</sup> 98, 13 <sup>0</sup>	Անգրակէտների Անգրակէտների Հայեր Թուր- քեր Հայեր Թուր- քեր	Պար- սիկներ

Դժուար չէ նկատել, որ կրթական գործում ամենայիշտին տեղը ըռնում են պարսիկները, քիւրդերը 1,27, ուրեմն 44,056 հոգուց գրագէտ են 561 հոգի, իսկ մասցած 43495 հոգի խարիս- փում են խաւարում, 105,042 թուրքից գրագէտ են 2550 հոգի 2,43<sup>0</sup>-ը, հայերի 9,59<sup>0</sup>-ն է գրագէտ։ Գրագիտութեան ամենա- բարձր տոկոսը տալիս են վրացիները 59,30<sup>0</sup>, իսկ երկրորդ տեղը ըռնում են ոռւաները 41,54<sup>0</sup>։

Կասկած չկայ որ 1897 թ. մինչև այժմ կրթական գործը Ղարսի շրջանում բաւականաչափ զարգացած կը լինի, բայց այ- նուամենային պէտք է ենթադրել, որ այն աստիճանի զարգացած չի լինի, որպէսզի այդ չնչին 10,78<sup>0</sup>-ը զգալի կերպով բարձրա- ցած լինի. Նամանաւանն մահմեդական տարրը ազգաբնակչութեան կիսից աւելին կազմելով, կրթական գործին անտարերերութեամբ է վերաբերում։ Բայց մի կողմ թողնելով ենթադրութիւնները ան- համբերութեամբ պէտք է սպասել գալիք 1915 թ. վիճակագոր- թեան լոյս տեսնելուն։

Գ. Տէր Մկրչեան